ծիքների անսպասելի դաժանութեամբ։ Ցիշում ենք և երբէք չենք մոռանալ նրա օլիմպիական սառնութիւնը մի քանի հարիւր հազար տաճկահայ կոտորուածների վերաբերմամբ։ Ցիշում ենք և երբէք չենք մոռանալ, որ նա չը բարեհաճեց ոչ միայն մի քանի տող նուիրել միլիոնաւոր հալածուածների և թշուառների բողոքին, այլ և չը տատանուեց մինչև անդամ բացարձակ արտայայտելու իւր անտարբերութիւնը։

Ի՞նչ է նշանակում մեծ հեղինակի այս վարմունքը։ Մեծութիւն, թէ՞ միրաժ։ Մարդիկ կարող են չափազանց յատիշտակուել և մի սոսկ տաղանդաւոր գրողի նոր մարգարէի բարձրութեանը արժանացնել. բայց մի՞թէ մարգարէները անողոք են եղել դէպի թշուառների վիճակը։

Ճակատագրական է ռուս նշանաւոր գրողների վերջը նրանց հոգեկան աշխարհի համար առհասարակ։ Գոգոլը գրեց գրեց և վերջը ընկաւ միստիցիզմի մէջ։ Դոստոեվսկին նկարագրեց, նկարագրեց թշուառների ու զրկուածների վիճակը և վերջը դարձաւ նոյնպէս միստիկ և թթու ազգամոլ։ Այժմ Տոլստոյը։ Նա հերքում է Շէքսպիրի արժանաւորութիւնները։ Տէրը նրա հետ։ Շէքսպիրին շատերն են փորձել կործանել և այժմ նրանց անուան հետքն անդամ չի մնացել, իսկ Շէքսպիրը կայ և կը մնայ։ Սակայն հերքել ռուս լաւագոյն ինտելիգենցիայի և ռուս բանուորների լաւագոյն մասի ձգտումների իմաստը, այս այնքան էլ թոյլ յանցանք չէ, որ պատմութեան պատժից զերծ մնայ...

Այժմ մեծ հոր փոքրիկ որդու մասին։ Սա ևս գրող է, միայն գրող է աստառը շուռ տուած։ Տոլստոյ-որդին „Нов. Время"-ի խախուտ սիւներից մէկն է։ Դեռ մի քանի ամիս առաջ այս նոր Հերոստրատը սպառնում էր Սուվորինի կազմած մի գնդով ջնջել աշխարհի երեսից Անգլիա կոչուած պետութիւնը և Նեվայի ափերից ոմբակոծում էր ծովերի թագաւոր Ալբիոնի հրեշաւոր նաւերը։ Այժմ նա ճգնում է թղթէ վամփուշտներով իւր հայրենիքի ներքին հսկայական շարժման առաջն առնել։ Ծրագիրներ է յօրինում միմեանցից խորխմաստ և հանճարեղ, որոնք սակայն ենթարկուում են իւր հայրենիքի եբախտաւոր հրապարակախօսների ծաղրին և ծիծաղին։

---

## ՆՈՐ ԳԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կովկասեան հայ պարբերական մամուլը հարստանում է մի քանի նոր հրատարակութիւններով։ «Ազգային բանբեր»

թերթի մասին արդէն գրել ենք։ Նրա խմբագիր-հրատարակիչ պ. Գէորգ Մելիք-Կարագեոզեանը տակաւին թոյլատրութեան իրաւունքը պահում է իւր գրասեղանում, երբ պիտի սկսի լրագիրը հրատարակուել՝ չգիտենք։ «Նոր-Դարը» վերսկսում է ներկայ մայիսից և արդէն բաժանորդագրութիւն է բաց արել։ Բագուում երդուեալ հաւատարմատար պ. Մ. Յարութիւնեանը աշխատում է ձեռք բերել «Զայն» վերնագրով մի ամենօրեայ լրագրի հրատարակութեան իրաւունք։ Տպագրական գործերի գլխաւոր վարչութիւնը, ասում են, արդէն տուել է իւր հաւանութիւնը, մնում է կատարել մի քանի ձևականութիւններ։ «Զայնը», հակառակ գոյութիւն ունեցող հայ լրագիրների ծաւալին, որ մինչև այժմ գրպանի թաշկինակից մեծ չի եղել, պիտի հրատարակուի ևրոպական և ռուսական լրագրների մեծ ծաւալով։ Լրագիրը հրատարակուելու է Բագուում։ Մասնաւոր փաստաբան և „Тиф. Листокъ“ լրագրի նախկին խմբագիր պ. Յովհաննէս Խաչատրեանը խնդրամատոյց է եղել, որ թոյլ տրուի իրան Թիֆլիսում հրատարակել «Ժողովուրդ» անունով մի ամենօրեայ քաղաքական, հասարակական և գրականական հայերէն լրագիր։ Պ. Խաչատրեանը նոյնպէս ստացել է պատշաճաւոր իշխանութեան հաւանութիւնը և արդէն հոգում է ապագայ խմբագրութեան կազմի մասին։ Նա մտադիր է իւր լրագիրը դնել հայ յայտնի գրողների տրամադրութեան տակ։ Ուսուցիչ պ. Ղարագեոզեանը նոյնպէս աշխատում է ձեռք բերել իրաւունք Թիֆլիսում հրատարակելու «Խօսք» անունով մի ամենօրեայ թերթ։ Իսկ տիկ. Լիսիցեանի «Հասկեր» անունով մանկական ամսագիրը պիտի հրատարակուի սեպտեմբերից։

Այժմ մեր խմբագիրներին մնում է հոգալ բաժանորդներ ձեռք բերելու մասին, որ իրանց հրատարակութիւնների համար մահուան և կեանքի խնդիր է և գրաւել աշխատակիցներ, որ նոյնպէս պակաս կարևոր խնդիր չէ։ Բաժանորդագրութեան յաջողութիւնը գլխաւորապէս կախուած կը լինի մրցումից։ Իսկ մրցման մէջ յաջողութիւն կունենայ այն հրատարակութիւնը, որ կը կարողանայ իւր կողմը գրաւել մեր լաւագոյն գրականական ոյժերը։ Իսկ գրականական լաւ ոյժեր գրաւելու համար մեր խմբագիրները, բացի ուղղութիւնից, պէտք է ունենան և մի ուրիշ զօրաւոր միջոց—դրամ։ Անցան այլ ևս այն երանելի ժամանակները, երբ թերթերը պահում և պահպանում էին ձրի աշխատակիցների շնորհիւ։ Այդ ողորմածութիւնը այժմ մի փոքր սպառուել է։

---